eral outlined factors relating to the cultural, economic, educational, and scientific life in Armenia and the Armenian community in the U.S. West Coast. Counselor Varazdat Pahlavuni from the Consulate General also attended the meeting.


The population of the City of Burbank is 105,000. It has a sizable Armenian community. Burbank is known as the “Media Capital of the World.” Numerous media and entertainment companies are headquartered or have production facilities in Burbank, including Warner Bros. Entertainment, The Walt Disney Company, Nickelodeon Animation Studios, The Burbank Studios, Cartoon Network Studios, and Insomniac Games.

Peter Balakian and Aram Arkun to Present “The Ruins of Ani: From Sacred Landscape to Political Soil”

BELMONT — The National Association for Armenian Studies and Research (NAASR) will host a presentation by Dr. Peter Balakian and Aram Arkun entitled “The Ruins of Ani: From Sacred Landscape to Political Soil,” on Thursday, February 27, 2020, at 7:30 p.m., in Batmasian Hall on the third floor of the new NAASR Vartan Gregorian Building, 395 Concord Ave., Belmont, MA. The program is co-sponsored by the Tekeyan Cultural Association Boston Chapter and the NAASR/Calouste Gulbenkian Foundation Lecture Series on Contemporary Armenian Issues.

From the tenth to the thirteenth centuries, the city of Ani was the jewel of the Armenian kingdom, renowned far and wide for its magnificent buildings. By the fifteenth century, Ani was virtually abandoned, its stunning buildings left to crumble. Yet its ruins have remained a symbol of cultural accomplishment that looms large in the Armenian imagination.

Today, Ani is a popular tourist site in Turkey, but the city has been falsified in its presentation by the Turkish government in order to erase Armenian history in the wake of the Armenian Genocide. Krikor Balakian’s *The Ruins of Ani*, first published in Armenian in 1910 as *Nkaragrut’iwn Anii aweraknerun* and now available in English, is a unique combination of history, art criticism, and travel memoir. This timely publication and program raise important questions about



the preservation of major historic monuments in the face of post atrocity campaigns of cultural erasure. Balakian and Arkun served as editor and translator, respectively, of *The Ruins of Ani* (Rutgers Univ. Press).

Dr. Peter Balakian is the Donald M. and Constance H. Rebar Professor of the Humanities in the department of English at Colgate University in Hamilton, New York. He is the author of many books, including *The Burning Tigris: The Armenian Genocide and America’s Response*, winner of the Raphael Lemkin Prize; *Black Dog of Fate*, winner of the PEN/Albrand Award for Memoir; and *Ozone Jour-*

Film Screening About Gyumri Family Murder Draws International Audience

By Christine Aghakhanian

GLENDALE — “About Him: Or How He Did Not Fear The Bear,” an internationally acclaimed film written and directed by Arsen Azatyan and Nariné Mkrtychyan documenting the aftermath of the gruesome massacre of the Avetisyan family, has received international recognition and will be screened at the Laemmle theater in Glendale beginning February 14.

In January of 2015, Russian soldier Valery Permyakov brutally murdered 7 members of the Avetisyan family in Gyumri, including a 6 month old infant named Seryozha who was fatally stabbed in the chest. The Armenian government requested that the murderer be charged in Armenian court, but the Russian government declined and instead convicted him with a lesser charge and a 10-year prison sentence.

Protesters in Armenia believed the punishment did not fit the crime and that justice was not served for the Avetisyan family. Filmmakers Azatyan and Mkrtychyan hope to share this important story of social injustice and the lack of dignity for the innocent victims through “About Him” on the world stage.

The film received critical acclaim in 2019 at several film festivals, including the Rotterdam International Film Festival, Eurasia Bridge Yalta International Film Festival, Uruguayan International Film Festival and the Hainan Island International Film Festival.

“It was our eighth time participating in the Rotterdam International Film Festival and we are very grateful

and has served as Director of the Zohrab Center in New York City and as editor of *Ararat Quarterly*.

For more information about this program, contact NAASR at 617-489-1610 or hq@naasr.org or Tekeyan Cultural Association at tcadirector@aol.com.



that there are film festivals like this which feature art house films,” said Azatyan and Mkrtychyan. “We have invitations from many other film festivals and anticipate to receive more recognition in the near future,” they added.

Most of the film features reenactments by actors, however the filmmakers used actual footage from protests that took place on the streets in Armenia. “The people in Gyumri and all of Armenia were living in a great state of shock [after the mass murder] and our film documents these events. It is our hope to make the world a better place through our films,” they added.

Ticket sales will begin on February 7. For more information, visit:

<https://www.laemmle.com/film/about-him-or-how-he-did-not-fear-bear#get-tickets>

Senator Anthony J. Portantino Delivers Letter

Continued from page 1

is the first California International Trade Desk to be established is a recognition of the impact of the Velvet Revolution, the importance of the California/Armenia relationship and the significant presence Diaspora Armenians have in California.

“It was a tremendous honor to have had the opportunity to deliver a personal invitation from Prime Minister Pashinyan to Governor Newsom. I was pleased to have first met the Prime Minister in Yerevan last year, in Los Angeles and again in New York. Watching and listening to the genuine, warm conversation between the Governor and the Prime Minister has been one of the highlights of my time in office. Having a front row seat for these important economic and historic events is a privilege. I am very grateful to Governor Newsom for his commitment to strengthening our ties with Armenia and I hope he will one day

take up the offer to visit Armenia in person like I have,” commented Senator Portantino.

In addition to representing a large and vibrant Armenian American Community, Senator Portantino is the Chair of the State Senate Select Committee on California Armenia Artsakh Art, Trade and Cultural Exchange. He has long-standing positive ties to the Armenian Community. The Governor has also enjoyed a very positive relationship with the Armenian Community dating back to his time as Mayor of San Francisco and the Senator looks forward to continued work to strengthen the special relationship that California and Armenia share.

“California and Armenia have so much in common and we should be doing everything we can to foster this connection. The Governor has a long and positive relationship with the Armenian American Community and his efforts to negotiate the MOU are to be commended,” concluded Senator Portantino.

Արա Կիւլէրի Լուսանկարիչ Գործերու Ցուցահանդէսը՝ Հռոմի մէջ



Աշխարհահռչակ անմոռանալի լուսանկարիչ Արա Կիւլէրի ստեղծագործութիւններու յայտնի ցուցահանդէսի շրջագայութիւնը կը շարունակուի՝ աշխարհի յառաջատար քաղաքներով: Այս ցուցահանդէսի նոր կանգաւոր կը հանդիսանայ Հռոմ, ուր Թրասթեւերէի թանգարանէն ներս բացուած է Արա Կիւլէրի ցուցահանդէսը:


Յարզ Լոնտոնի, Փարիզի, Քիոթոյի եւ Նիւ Եորքի մէջ կազմակերպուած այս ցուցահանդէսը այժմ կը կրկնուի Հռոմի մէջ: Սա արդէն հինգերորդ անգամն է, որ միջազգային հարթակի վրայ կը ծանօթացուի Արա Կիւլէրի նկարահանած դրուագները՝ անցեալ տարուան ապրիլ ամիսէն ի վեր: Հանրապետութեան նախագահութեան նախաձեռնութեամբ, Արա Կիւլէրի թանգարանի արխիւային ու հետազոտութեան կեդրոնի համագոր-

ծակցութեամբ կեանքի կոչուած հերթական ծրագիրն է այս մէկը: Ցուցահանդէսը կը ցոլացնէ նաեւ անմոռանալի վարպետի կեանքին ու գործունէութեան վերաբերեալ ինչ-ինչ ծալքեր:

Հռոմի մէջ ցուցահանդէսի պաշտօնական բացման արարողութեան ներկայ գտնուեցան Հանրապետութեան նախագահի աւագ խորհրդական Ֆեճիր Ալիթեքին, Հռոմի մօտ Թուրքիոյ դեսպան Մուրատ Սալիմ Էսենլի, Վատիկանի մօտ Թուրքիոյ դեսպան Լիւթֆուլլահ Կէօքթաշ, իտալական պետական շրջանակներէ բարձրաստիճան ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հիւրեր:

Տեղական մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ այս իրադարձութեան՝ ընդգծելով նաեւ իտալական զանգուածային լրատուութեան միջոցներուն կողմէ ցուցաբերուած հետաքրքրութիւնը:

Երուսաղէմի Մէջ Իր Մահկանացուն Կնքած Է Պատմաբան Ալպերթ Աղազարեան



Ալպերթ Աղազարեան ծնած է 1950-ին, Երուսաղէմի մէջ: 1970-ին աւարտած է Պիրզեթ համալսարանը, 1977-ին ստանձնած է նոյն համալսարանի ընդհանուր յարաբերութեանց գրասենեակի տնօրէնութիւնը մինչեւ 2002, եւ եղած է պատմութեան դասախօս:

Երուսաղէմի մասին անոր հրատարակութիւնները մեծաթիւ չեն, սակայն ան ծանօթ է իբրեւ աշխարհի լաւագոյն երուսաղէմագէտը:

Պարգեատրուած է Պելճիբաչի թագաւորին կողմէ՝ Պաղեստինեան դատը միջազգային հարթակներու վրայ լաւապէս ներկայացնելուն եւ անոր տարածման մէջ իր ներդրումը ունենալուն համար:

Ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ, պատմագիտական

յօդուածներ, տուած է անհամար դասախօսութիւններ:

Պաղեստինեան իշխանութեան Մշակութի նախարարութիւնը բարձր գնահատած է Ալպերթ Աղազարեանի ներդրումը Երուսաղէմը պատմական դիտանկիւնէ ծանօթացնելու գործին մէջ:

Անոր մահուան առիթով նախարարութիւնը յատուկ յայտարարութեամբ մը նշած է, որ պաղեստինցի ժողովուրդը կորսնցուցած է միջազգային հարթակներու եւ մակարդակի վրայ Պաղեստինեան դատի ամէնէն թունդ պաշտպաններէն մէկը:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպաս ցաւակցութիւն յայտնեց պաղեստինցի ժողովուրդին՝ «պաղեստինեան ազգային իրաւունքներու պաշտպան

Արաբական Ծոցի Երկիրներու Եկեղեցիներու Հաղորդակցութեան Տարեկան Համաժողովը



Արաբական Ծոցի եկեղեցիներու Հաղորդակցութիւնը հիմնուած է 2012 թուականին: Անոր գլխաւոր նպատակն է ի մի համախմբել տարածաշրջանի բոլոր եկեղեցիները որոնք պետական ճանաչում եւ արտօնութիւն ունին: Եւ այս իմաստով անոր կառուցը հիմնուած է հինգ հիմնական եկեղեցական համայնքներու եւ ընտանիքներու համախմբումով: Ուղղափառ Արեւելեան եւ Արեւմտեան բաժիններով՝ կաթողիկէ, Աւետարանական եւ Եպիսկոպոսական-Անկլիքան: Հաղորդակցութիւնը իւր տարեկան հաւաք-հանդիպումը ուր առիթը կ'ունենան արծարծելու շատ մը գործունէութիւններ, մտահոգութիւններ բաց նաեւ աւելիով ամրապնդելու միջ-եկեղեցական շարափերութիւնները:

Այս տարի հաւաքը տեղի ունեցաւ Յունուար 28-29, 2020, Քուէյթի մէջ՝ ուր Յոյն Ուղղափառ եկեղեցին հիւրընկալեց աւելի քան երեսուն եկեղեցական առաջնորդներ Ծոցի տարբեր երկիրներէ: Յայտագիրը ընդգրկեց Հաղորդակցութեան տարբեր գործունէութիւններու տեղեկագիր, եկեղեցական կեանքի մասին մանրամաս-

նութիւններ ինչպէս նաեւ յատուկ աղօթք մատուցուեցաւ շրջանի եւ աշխարհի խաղաղութեան համար:

Հայկական ներկայութիւնը միշտ ալ եղած է աշխուժ այս Հաղորդակցութեան մէջ: Այս տարուայ տարբեր ժողով-հաւաքին իրենց մասնակցութիւնը բերին՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Քաթարի Հայոց Թեմի առաջնորդ Քերշ.Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանը, Քուէյթի եւ շրջակայից Հայոց Թեմի առաջնորդ՝ կաթողիկոսական Փոխանորդ՝ Հոգ.Տ.Պետրոս Վրդ. Մանուէլեան եւ հոգեւոր հովիւ՝ Արթ.Տ.Արտակ Ա.Քհչյ.Քէհեայեան եւ Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէճեան:

Հաղորդակցութիւնը ունի նաեւ իր կեդրոնական վարչական ժողովը: 2020 տարեշրջանի համար կեդրոնական ժողովի ատենապետ ընտրուեցաւ Քերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանը:

Յիշեցնենք նաեւ՝ որ Հաղորդակցութեան ծրագիր-կանոնագրի պատրաստութեան մէջ իր կարեւոր բաժինը եւ մասնակցութիւնը բերած է Դոկտ. Հրայր Ճէպէճեան՝ 2012 թուականին երբ առաջին անգամ հիմնուեցաւ:

Ալ պերթ Աղազարեանի» մահուան առիթով:

Պատմաբան Ալպերթ Աղազարեան հիմնական դերակատարութիւն

ունեցած է իր աշխատութիւններով Երուսաղէմի պաղեստինեան պատկանելիութիւնը ապացուցելու առումով:

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

SAVE THE DATE

Spring Brunch

Benefiting the
AEBU Scholarship Fund

Sunday
March 22, 2020
AEBU Center - Pasadena

Մեծերը Չեն Մեռնիր...



ԼԻՆՏԱ ՊԱՆՏԻԼԵԱՆ

Մեծերը իրենց կարողություններն ու կարելիությունները կը Բաժնեն եւ Ջայն կը վերածեն

Տասնամեակ մը առաջ էր սփիւռքը կորսնցուց իր լաւագոյն զաւակներէն մէկը... Տասնամեակ մը առաջ էր հայրենիքը կորսնցուց իր ազնուագոյն գիտնականներէն մէկը....

Տարւորներն առաջ, Յունուար 30, 2010ին Հայ ժողովուրդը կորսնցուց իր լուսաւոր զաւակներէն ազնուագոյնը, յանցինս փրֆ. Հայաստան, ցեղասպանագէտ դաստիարակ եւ դասախօս Գէորգ ճորճ իւր լոբեանին, որուն անժամանակ հիւանդութիւնն ու մահը մեծ բաց մը յառաջացուց, ոչ միայն քաղիֆորնիոյ Հայ գաղութէն ներս, այլ ի սփիւռս աշխարհի հայաստան թէ սփիւռքը:

Մարդիկ անփոխարինելի չեն, կեանքի օրէնքն է սերնդափոխութիւնը, յատկապէս դաստիարակները, անոնց առաքելութիւնն է պատրաստել սերունդներ, կերտել նկարագրեր հասցնել գիտակից սերունդներ, այո, անոնք կը պատրաստեն նորերը, եւ աւելի լաւերը... բայց, իւրաքանչիւր սերունդ ունի իր իւրաքանչիւր համն ու հոտը, իր ժամանակի փորձառութեան յատուկ լեզուամտածողութիւնը եւ զայն յաջորդ սերունդին փոխանցելու ոճն ու դրութիւնը, այսպիսով անոնք՝ մեր դաստիարակները կարելի է համարել անփոխարինելիները:

Լուսաւոր անփոխարինելիներուն առաջնակարգերէն էր՝ փրֆ.Գէորգ իւր լոբեան. իր պարզութեան մէջ՝ մեծութիւնը կը շեշտուէր, իր ազնիւ պարկեշտութեամբ՝ շուրջինները կը բարձրացնէր, իր համեստութեամբ՝ յարգանք կը պարտադրէր:

Իւրաքանչիւրն էր իր անձնական կեանքի հոլովոյթով, ինչ որ հարստացուցած էր իր փորձառութիւնը, լեզուամտածողութիւնը եւ ընկերային հասկացողութիւնը:

Փրֆ.Գէորգ իւր լոբեանի նկարագրին ու կեանքի սկզբունքները կազմաւորուած էին Քրիստոնէական հասկացողութեամբ հիմնաւորուած, հայկական սովորութիւններով յագեցած հայաբոյր ընտանեկան յարկէ մը ներս, ուր Հայրը վերապատուելի Տիգրան իւր լոբեան իր աւօրեայ գործնական մարդասիրական աշխատանքներով եւ Մեծ հայրը մարդկային ազնուագոյն սկզբունքներու երկրպագու՝ Պատուելի Լոշխաճեանի անմիջական շունչով ներշնչուած Գէորգ հասակ առաւ եւ ձեւաւորուեցան իր հոգին ու նարագիրը, իսկ ընկերա-

յին հասկացողութիւնը զարգացաւ աշակերտելով կրօնական ընկերային եւ ազգային այլազան հակումներ ունեցող Հայկաբի Ամերիկեան երկրորդական վարժարանին մէջ, ան հմտացաւ հայերէնի կողքին՝ արաբերէն եւ անգլերէն լեզուներու մէջ միաժամանակ զարգացնելով իր ընկերային հակումները՝ աշխուժ եւ լայնածաւալ մասնակցութիւն բերելով աշակերտական խորհուրդի գործունէութեան մէջ:

1946ին 18ամեայ ուսումնառութեան Գէորգի բարձրագոյն կրթութեան ձգտումն ու երազները իրականացնելու մարտահրաւէրը, զինք ուղղեց դէպի հայրենիք՝ հայաստան, ուր ան եղաւ իսկական հայոց կուռնիք:

Ի բացառութիւն իր նմաններուն ան որպէս սփիւռքահայ ուսանող, ուսումը աւարտելով չվերադարձաւ արտասահման, Կիլիկիոյ արմատներէն իր հայրենասիրութիւնն ու պատկանելիութեան գիտակցութիւնը ներծած երիտասարդ Գէորգ հակառակ այդ ժամանակ Հայաստանի դժուար պայմաններուն, մնաց հո՛ն իր գիտութեան եւ հոգեկան աշխարհին յազուրդ տալու համար եւ չվերադարձաւ մինչեւ իր հասուն տարիքը: հաստատուեցաւ հայոց աշխարհի խաղաղ երկնակամարի տակ, համալրելով իր գոյութիւնը եւ ամբողջացնելով իր հայրենի երջանկութիւնը մանկավարժ եւ երաժիշտ Անահիտ Սեդրակեանի հետ. Անոնք կազմեցին իրենց երջանկի բոյնը եւ իմաստաւորեցին զայն աշխարհ բերելով երկու դուստրեր եւ չորս թոռներ:

Գէորգ եղաւ միշտ ալ ուսանող, սորվեցաւ եւ սորվեցուց, քաջալերեց եւ ներշնչեց իր ուսանողներն ու շրջապատը, ստացաւ նախ հայոց լեզուի, հոգեբանութեան եւ տրամաբանութեան մագիստրոսը, ապա դոկտորայի տիտղոսը եւ գրաւեց պատուաւոր տեղ հայ գիտնականներու փաղանգին մէջ: Իր գիտական ձեռքբերումներուն հետ զուգահեռ իր ճկուն, անկեղծ բնաւորութեամբ ան վստահութիւններ շնչեց շրջապատին եւ պատասխանատու մարմիններուն, ինչ որ իրեն առիթ ընծայեց ըլլալու ոսկէ կամուրջ Մփիւռքի եւ Հայաստանի միջեւ, որպէս Հայոց կուռնի՝ ան տարաւ հայրենի կարօտը՝ հայրենի սիրով տոջորուած սփիւռքահայութեան, յագեցուց ծարաւի հոգիները, ժողովուրդի մէջ մեծ խանդավառութիւն ստեղծելով բաց միշտ վերադարձաւ հայրենի բոյնը բերելով արտասահմանէն «խապրիկ» հայոց աշխարհին:

Ի Սէր Ընկերութեան



ԱՎԱՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի ալ 19 Յունուար թուականը մեզի թելադրեց ճամբորդութիւն դէպի օտար երկիրներ: Անցեալին ճիշդ ալ այդ օրերուն մենք պաշտօն համարած ու այցելած էնք զանազան երկիրներ, որոնց կարգին Եւրոպայի բազմաթիւ քաղաքներ: Իսկ այս տարի պատեհութիւնները մեզ տարին դէպի Հիւսիսային Ամերիկա: Շատերու համար հետաքրքրական այս ճամբորդութիւնը պարտինք խոստովանիլ, թէ մեզի համար մղձաւանջ մըն էր, այս երկրի յատուկ զանազան դժուարութիւններու բերմամբ: Արդարեւ տակաւին առաջին քայլէն սկսեալ, իբրեւ թէ անվստահութեան պատրուակով հարկադրուեցանք ոչ բնական բազմաթիւ հարցաքննութիւններու:

Օղակայանի մուտքի սրահին մէջ շուրջ երեք ժամ այդ դժուարութիւնները յաղթահարելէ ետք մեզ կը սպասէր 14 ժամուան ձանձրացուցիչ թուիչք մը, որու աւարտին կրկին անգամ պիտի հարկադրուէինք այդ նոյնպիսի «անվստահութեան» հարցովորձերը դիմագրաւելու: Այդ պահու տրամադրութեամբ «Սա մեր առաջին ու վերջին այցելութիւնը կ'ըլլայ դէպի ԱՄՆ» կը մտաբերէինք:

Սակայն իսկոյն սկսաւ մեծ ոգեւորութիւններ ապրելու պահերը եւ օրերը: Մեզ դիմաւորելու եկած էր վաղեմի բարեկամ Յովհաննէս Քուրակ Աւետիկեան, որուն հետ գրկուելով փորձեցինք թօթափել 40 տարիներու կարօտը: Իրաւ ալ Քուրակ 40 տարի առաջ հեռացած էր մեր քաղաքէն եւ անգամ մը եւս ոտք չէր դրած:

Իսկ մեր անցեալի մտերմութիւնը տարիներու ընթացքին կուտակուելով վերածուած էր մեծ կարօտի: Մօտ մէկ ժամ ետք կանգ առինք Յովհաննէսի դրան առջեւ ու այս անգամ նոյն կարօտով փաթթուեցանք Սեդային:

Ըստ քանի մը օրերու մեր ընկալումին Լոս Անճէլըս կոչուած վայրը բաւականին ընդարձակ տա-

րածք մըն է, որ չէ յաջողած «քաղաք» եզրի բացատրած յատուկութիւններուն տիրանալու: Բայց այդ իբրեւ թէ քաղաքի տարբեր հատուածներու մէջ կը բնակին սիրելիներ, որոնց մտերմութենէն զուրկ մնացած էինք երկար տարիներ:

Այսպէս անմիջապէս յաջորդ օր այցելեցինք մեր սիրելի հարազատները՝ Մելիք եւ Սիլվա Կավրիլֆո մոլլը: Իրենց հետ էր նաեւ սիրելի իրենը: Արտակարգ երջանկութիւն պարզեցեց մեր հանդիպումը: Նոյն օր անգամ մը եւս ուրախացանք թամար Նալճրի ծամանումով: Ան եւս մեր հարազատն է: Մեր տղոց հետ միասին մեծցած շնորհալի տիկին մը: Այս ոգեւորութեան միջոցով մեզ այցելեցինք թերթիս աշխատակից եւ դարձեալ վաղեմի բարեկամ Նորայր եւ Նուէր Տատուրեան ամուլի բազմանդամ ընտանիքը: Կրկին արտակարգ մտերմութիւն՝ այս անգամ իմ բազմաբնակ Հենրիկ Անասեանի եւ տիկնոջ Մարիթայի բնակարանին մէջ: Եւ նոր ծանօթութիւններ, նոր բարեկամութիւններ էտվին Մինասեանի եւ Յասմիկի ընկերական մտերմութեան շնորհիւ:

Ապա 5 ժամուայ միջքաղաքային թուիչք մը դէպի Ուաշինգթոն: Հոս եւս վաղեմի բարեկամի՝ Զաւեն եւ Սոնա Պաքըրճը ամուլի հետ հանդիպում: Հին օրերու վերջի շուրջ եւ կրկին նոր բարեկամութիւններ, նոր ընկերութիւններ, այս անգամ Յովհաննէս եւ Հռիփսիմէ Սվասթեաններու հետ:

Ուաշինգթոնի այս այցելութիւնը կը պարտինք Սիւզանին, որու հետ մտերմացած էինք վերջին տարիներուն իր դէպի իսթանպուլ կատարած այցելութիւններու շնորհիւ: Վիզէն սրբազանի հետ հանդիպելը եւս երջանկութիւն էր:

Այս բոլորէն յագեցած կերպով, երբ տուն դարձի համար կը մտնէինք Ուաշինգթոնի օդակայանը, մտքերնէս անցնող բոլորովին տարբեր տրամադրութիւն էր. «Տասը տարուայ վիզա ունինք, ի սէր այս ընկերութեան երբ պէտք կ'ըլլայ սիրով կ'երթանք»:

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepyan@gmail.com

Ուիլսոնը Զորչիլի ինքնակենսագրութիւնը Հայերէնով

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ

«ԳրաՏուն» հրատարակչութիւնը հայ ընթերցողի սեղանին դրած է աշխարհի նշանաւոր քաղաքական գործիչներէն մէկուն՝ 1940-1945 եւ 1951-1955 թուականներուն Միացեալ Թագաւորութեան վարչապետ, Բրիտանական ակադեմիոյ պատուաւոր անդամ, գրականութեան Նոպելեան մրցանակի դափնեկիր Ուիլսոն Չորչիլի «Ինքնակենսագրութիւն» գիրքը հայերէնով: Գիրքը թարգմանած է Արմինէ Մարկոսեան, իսկ իբրեւ կողքի լուսանկար ընտրուած է հայ լուսանկարիչ Եուսուֆ Քարշի (Յովսէփ Քարշեանի) յայտնի լուսանկարը, որ պատմութեան մէջ մտած է «Մոնչացող առիւծը» անունով:



Անգլիա, ուր մանուկ տարիքէն կրթութեան եւ վաղ դաստիարակութեան խստութիւնները ուղեկցած են իրեն: Մանուանող դայկակին՝ էլիզաբէթ Էն էլիզեթին մասին վառ յիշողութիւններ պահպանուած են. դայեակը ան գաղտնի կերպով «պառաւ» կը կոչէր:

Չորչիլին դպրոց յաճախած առաջին տարիներու յիշողութիւնները խիստ պատիժներու մասին էին, որոնց ներքոյ ան կը սերտէր դժուար դասերը, յատկապէս հետաքրքրութիւն կը ցուցաբերէր աշխարհագրութեան եւ երկիրներու քարտէսներուն հանդէպ: Տակաւին դպրոցական տարիներէն Չորչիլ մեծ հետաքրքրութիւն ցոյց կու տայ գինուորական կեանքին եւ կը հաւաքէ գինուորիկ-խաղաղ բերու մեծ հաւաքածոյ մը՝ մօտ տասնհինգ հազար գինուոր, բոլորը բրիտանացի գինուորներու կերպարով:

Հարու դպրոցին մէջ 1889 թուականին Ուիլսոնը կը փոխադրեն յատուկ գինուորական թեքումով դասարան մը: Պատանի Ուիլսոնը դպրոցին մէջ աչն տասներկու աշակերտներէն էր, որոնք կրնային յանձնել աւարտական քննութիւններու բոլոր առարկաները. յատկապէս անոր մօտ կը դիտուի պատմութեան հանդէպ բարձր հետաքրքրութիւն, իսկ 1892 թուականին ան սուսերամարտի յաղթանակով կը դառնայ դպրոցի ախոյեան:

Ան իր հաւաքած գինուորախաղաղիքներուն միջոցաւ կը բեմադրէր պատերազմներ, եւ երբ հայրը կը տեսնէ որդիին սէրը բանակային կեանքին հանդէպ, կ'առաջարկէ բանակին մէջ ծառայել. Չորչիլ անմիջապէս կը համաձայնի: Փաստօրէն, խաղաղիք գինուորները մեծ դեր կատարած են անոր կեանքին մէջ եւ զայն մղած գինուորական ասպարէզ:

Անոր հայրը՝ լորտ Ռենտոլֆ Սփենսըրը Չորչիլը, ճանչցուած քաղաքական գործիչ էր, խորհրդարանի Համայնքներու պալատի պատգամաւոր էր եւ յետագային, ինչպէս Ուիլսոնը, հայրն ալ Պահպանողական կուսակցութեան անդամ էր:

Մայրը՝ ձենի ձերոմ ամերիկեան հարուստ ձեռնարկատիրոջ մը դուստրն էր: 1893 թուականին Ուիլսոնը Չորչիլ կ'ընդունուի Սանթհարսթի Թագաւորական ուսումնական ակադեմիա՝ յամենէն անուանի ուսումնական ուսումնական հաստատութիւններէն մէկը: Մօտ մէկ տարի ակադեմիոյ մէջ ուսանելէ ետք, 2 Փետրուար 1895 թուա-

կանին կը ստանայ կրտսեր հրամանատարական առաջին կոչումը, նոյն այդ տարին ան կը կրէ երկու ծանր կորուստ, կը մահանան հայրն ու սիրելի դայեակը:

Կոչումը ստանալէ ետք Ուիլսոնը Չորչիլ կ'անցնի ծառայութեան թագուհիին անձնական չորրորդ գունդին մէջ: Քանի մը ամիսէն, մօրը միջամտութեամբ, Չորչիլ կ'ուղարկուի Քուպա, որպէս «Daily Graphic» թերթի գինուորական թղթակից. ան պէտք է հանգամանօրէն ներկայացնէր սպանացի զորութեան ղեմ տեղացիներուն ապստամբութիւնը:

Սպանական բանակին հետ գործուղման մէջ գտնուելուն ընթացքին, ան առաջին անգամ կը յայտնուի կրակի գոտիին մէջ եւ անոր յղուածներէն հինգը կը տպագրուին թերթին մէջ, որոնցմէ քանի մը հատը՝ «New York Times»-ի մէջ:

Սպանիոյ կառավարութեան կողմէ «կարմիր խաչ» մետալով պարգևատրուելը Չորչիլին սքանաչափ բնատրութեան աւելի մեծ ճանաչողութիւն կը բերէ, անոնցմէ ետք բրիտանական մամուլը կը յայտնէ իր կասկածները անոր, որպէս թղթակից, միջանկեալ դիրքին մասին: Քուպայի իր ծառայութիւնը աւարտելէն ետք, դէպի Անգլիա ետդարձի ճամբուն, Չորչիլ առաջին անգամ կ'ըլլայ Միացեալ Նահանգներ:

Յետագային՝ 1896 թուականի հոկտեմբերին, Նոր զօրամասը կ'ուղարկուի Հնդկաստանի Պանկալոր քաղաք: Չորչիլ փորձելով լրացնել համալսարանական կրթութեան պակասը շատ կը զբաղի ընթերցանութեամբ եւ կը դառնայ զօրամասային խումբին մէջ հմուտ փոխադրոց:

Մօտ մէկ տարի Պանկալորի մէջ ծառայելէ ետք, ան ցանկու-

թիւն կը յայտնէ միանալ Հնդկաստանի հիւսիս-արեւմուտքին, Մալաքանտ լեռնային շրջանին, փուշ-թուններու ցեղերուն դէմ պայքարող բըր-բրիտանական գինուորական արշաւարմբային բաժանմունքին. այս հարցին նոյնպէս անոր օգնութեան կը հասնի բարձրաշխարհիկ շրջապատին մէջ ունեցած մօր կապերը: Այստեղ, ուղիղապէս գործողութիւններուն ընթացքին, որ աւելի վտանգաւոր ու դժուար էին, քան Քուպայի մէջ, Չորչիլ աչքի կ'իջնայ խիզախութեամբ, որուն մասին կը գրէ մօրը. «Այս աշխարհին մէջ, աւելի շատ կը ձգտիմ ձեռք բերել քաջի համբաւ, քան որեւէ այլ բան»: Իսկ իր մեծ մօր՝ Հերցոգուհի Մարլպորոյին ուղղուած նամակին մէջ կը քննադատէ այս գործողութիւններուն անիմաստութիւնը եւ երկկողմանի դաժանութիւնը: Մալաքանտէն վերադառնալէ ետք, Չորչիլ կրկին կը դիմէ հրամանատարութեան, որպէս գինուորական թղթակից Հիւսիսային Աֆրիկէ գործողութիւն համար, սակայն ան չ'արժանանար հրամանատարութեան հաւանութեան, անոր համար անձամբ կը դիմէ վարչապետին՝ լորտ Ռոպերթ Սոլսպերիին, որուն հետեւանքով Չորչիլ կը նշանակուի հրամանատարական առաջին կոչումի արտահաստիքային պաշտօնի, բայց հրամանատարը յատուկ կը նշէ, որ վիրաւորուելու կամ զոհուելու պարագային ան ուղղակի ֆրոնտէն հատուցում պիտի չ'ստանայ:

1898 թուականին կ'ուղարկուի Եգիպտոս, ուրկէ Սուտան՝ ճնշելու Մահադիականներուն ապստամբութիւնը: Հոն ան նաեւ կը թղթակցի Լոնտոնի «Morning Post» օրաթերթին: Սուտանի մէջ ապստամբները ունէին թուական գերակշռու-

Շար.ը էջ 19

Under the Auspices of H.E. ABP. HOVNAN DERDERIAN, Primate
Western Diocese of the Armenian Church

Free Admission

FILM SCREENING

IN HONOUR OF MR ASSADOUR GUZELIAN

7:30 PM
Thursday, FEBRUARY 6
St. Leon (Ghevondiants) Armenian Cathedral

Կիսով եւ Կիլիկյան վարժարանը, թիւ 4-ին ընդունվել է Կիլիկիոյ Եվանջել, Լիբանան, որպէս սան: Սարգսի հոգացել է Ասատուրի և, 1952 թ.:

Գեղյանն ունեցել է մի շարք Կաթողիկոս Հովսէփյանց՝ մեծագույն մասնագետ հիլիսոփա, գրական քննարարագետ, պատմագետ, վիպագիր, ռժ, ուսումնասպետ ամբաշնորհ Պեր-

3325 N Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Թրքերենով Նոր Հատոր՝ «Էրմենիլարըն Թարիհի»

«Արաս» հրատարակչությունը վերջերս ընթերցասէրներու տրամադրութեան տակ դրաւ պատմական կարեւոր ուսումնասիրութիւն մը, որու հեղինակն է ֆրանսացի պատմաբան Ռենէ Կրուսէ:

Թերթը նաեւ կը նշէ, որ «1947 թուականին այս աշխատութեան ֆրանսերէն բնագիրը առաջին անգամ հրատարակուած է Փարիզի մէջ՝ «Հայաստանի պատմութիւն» անուան տակ: Գործը վերահրատարակուած է նաեւ 1984 եւ 1995 թուականներուն: Հեղինակը թէեւ 1952 թուականին մահացաւ, սակայն իր այս գործը գիտական շրջանակներէ ներս կը շարունակէ բարձր արժէք ներկայացնել: Իբր այդ, այս գիրքը կ'արժանանայ նաեւ պատմական նիւթերու հետամուտ ընթերցողներու հետաքրքրութեան: Ռենէ Կրուսէի այս կարեւոր գործը ֆրանսերէնէ թրքերէնի թարգմանուած է Սօսի Տոլանօլուի կողմէ: Թրքերէն թարգմանութիւնը կը կրէ՝ «Ակունքներէն մինչեւ 1071 հայոց պատմութիւնը»:

Գիրքը հրատարակութեան պատրաստուած է Ռոպէր Գոպիթաշի կողմէ: Կողքի գեղարուեստական ձեւաւորումը կը պատկանի Մելիսա Արսէնեանի: Ճակատին վրայ օգտագործուած է Նորայր Շահին-



BAŞLANGICINDAN 1071'E
Ermenilerin Tarihi
RENÉ GROUSSET
Fransuzca'dan çeviren: Sosi Dolanoglu


եանի կողմէ Աղթամարի մէջ նկարահանուած դրուագ մը:

Հաստափոր այս հատորը, որ նոյնպէս վերահրատարակութիւն մըն է, վստահաբար աւարկայ դառնայ հետաքրքիրներու անմիջական ուշադրութեան: Արդարեւ, այսպիսի մասնագիտական գիրքի մը վերահրատարակումը կու գայ ապացուցանել, որ միշտ ալ հետաքրքրութիւն մը կ'ըլլայ այսպիսի ծաւալուն ուսումնասիրութիւններու նկատմամբ»:

Ստացուած Գիրքեր Ինքս՝ Ինձ Հետ Յուշավէպ

Հեղինակ՝ Սարգիս Վահագն 155 էջերէ բաղկացած սոյն հատորը՝ ձեւով մը ինքնակենսագրութիւն մըն է, համեմուտ տասնեակ տարիներու իր գրական-գեղարուեստական եւ հասարակական գործունէութեան՝ համեմուտ հետաքրքրական յուշապատումներով:

Գիրքը լոյս տեսած է 2019ին, Լոս Անձելոս, մեկնաստութեամբ Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Սօսի Համալեաններու:



Հայերենով Դրուագ՝ «Օսքար»-ի Յաւակնող Ֆիլմին Մէջ



«Փոքրիկ կանայք» ֆիլմին մէջ, որ «Օսքար»-ի կը յաւակնի «Լաւագոյն ֆիլմ» անուանակարգին, կարճ դրուագ ներառուած է, ուր տղամարդը կը խօսի հայերէնով: Բեմադրիչ Կրեթա Կերվիկի ժապաւէնը շարժանկարի արտադրութեան ամենահեղինակաւոր մրցանակաբաշխութեան ներկայացուած է եւս հինգ անուանակարգերու մէջ: Ֆիլմի դրուագներէն մէկուն մէջ (ժապաւէնը հիմնուած է ամերիկացի գրող Լուիզա Մէյ Օլքոթի

վէպի վրայ) տղամարդը կը խօսի հայերէն եւ հերոսուհին պարի կը հրաւիրէ. «Ինչու Ձեզի նման գեղեցիկ կինը չի պարէր»: «Ներեցէք, ես միայն անգլերէն կը խօսիմ»,- հերոսուհի պատասխանին տղամարդը նախ հայերէնով՝ կ'արձագանգէ՝ եկուր պարէ, ապա՝ անգլերէնով: Ֆիլմի գլխաւոր դերակատարներն են Սիրշա Ռոնանը, Էմմա Ուոթսընը, Ֆլորենս Փիւն, Էլիզա Սքանլենը, Լորա Տերնը, Թիմո

Առողջապահութիւն Մասնիկներ Որոնք Կ'օգնեն Սիրտի Անօքներուն

ԱՄՆ-ի «Միջիկըն Սթէյթ Եունիվըրսիթի» համալսարանէն խումբ մը հետազոտողներ կը յայտնեն, որ կրցած են պատրաստել շատ մանր մասնիկներ (nanoparticles), որոնք պիտի «ուտեն» սիրտի տազնապ պատճառող հիւանդ երակներու մասերը: Այս պիտի հաստատուելու պարագային, պիտի դառնայ շրջադարձային սիրտանօթային հիւանդութիւններէ տաուապող մարդոց համար:



Արհեստագիտութիւնը կ'օգտագործէ շատ մանր մասնիկներ, որոնք կը սրսկուին արեան երակներու մէջ: Անոնք երբ հասնին հիւանդ երակներուն, կը մտնեն անոնց մէջ: Ապա նիւթ մը կը

սրսկուի, որ այս մասնիկները կ'աշխուժացնէ «ուտելու» երակներուն հիւանդ մասը, այդ ձեւով երակները վերադարձնելով իրենց բնական չափին: «Սայընս Տէյլի»

Բնապահպանութիւն Ծովու Մակարդակի Բարձրացումին Հետեւանքները

Ըստ Հարաւային Գալիֆորնիա համալսարանի խումբ մը հետազոտողներու, ովկիանոսներու մակարդակի բարձրացումը՝ համաշխարհային տաքացումին պատճառով, կրնայ ծովեզերեայ քաղաքներու բնակչութեան դէպի ներս գաղթի պատճառ դառնալ:




ԱՄՆ-ի մէջ ամենաշատ ազդուող շրջանները կրնան ըլլալ Ֆլորիտա, Նիւ Օրլէնզ, Հիւսիսային Գարոյայնա, Վիրճինիա եւ Մասաչուսէց նահանգները: Այս նահանգներու մօտ 13 միլիոն բնակիչ պիտի գաղթեն դէպի ներքին քաղաքներ: Այս շարժումը մինչեւ 2100 թուական պիտի բազմացնէ ներքին քաղաքներու բնակչութեան թիւը, ճնշումը աւելցնելով քաղաքներու եւ թակառուցուածքին, բնակարաններու գինին,

պաշտօններու թիւին վրայ: Կը սպասուի, որ ովկիանոսի ջուրի մակարդակը բարձրանայ մօտ երկու մեթրի չափ: Այս փոփոխութիւնը պիտի ազդէ ծովեզերեայ բոլոր այն երկիրներու նաւահանգիստներուն վրայ, որոնք կը գտնուին ծովու կամ աւելի ցած մակարդակի վրայ: «Սայընս Տէյլի»

Սարմին-Սիտք-Հոգի Յարաբերութիւնը

Ա. ՄԱՍ Այս եռեակին միջեւ կապը միշտ հարցումներու դուռ բացած է ու մարդը հարցուցած է, թէ ի՞նչ բանն է որ իր մէջ կը շարժի, երբ տեսնէ անարդարութիւն մը, սխալ գործ մը: Ի՞նչ բանն է որ մեզի կ'օգնէ որոշում կայացնելու: Ի՞նչ բանն է առժամեայ եւ ի՞նչ բանն է մնայուն: Այս բոլոր հարցումներուն պատասխանները կու տայ ուս միսթիք փիլիսոփայ Անասթափա Նովիկ:



Սիտքը կու գայ ֆիզիքական աշխարհէն եւ անոր նման առժամեայ է: Մնայունը հոգին է, որ կ'ապրի առ յաւէտ: Ֆիզիքական մարմինը չունի տուն մնայուն: Մարդուն իսկական Տունը, որու պիտի վերադառնայ ֆիզիքական գոյութեան աւարտէն ետք, իր հոգին Տունն է: Այս Տունը մնայուն է: Ուրեմն, մեր հիմ նական աշխատանքը պէտք է ըլլայ այդ

Յաւատնական կեանքի ճամբու յարդարումը: Մարդիկ իրենց ամբողջ կեանքը կը նուիրեն ֆիզիքական հաճոյքներու, որոնք առժամեայ են եւ քիչ ժամանակ կը տրամադրեն բուն հաճոյքին, որ Յաւատնական կեանքին պատրաստուելու հաճոյքն է, վարելով համեստ, ժուժ կալ կեանք մը: Անասթափա Նովիկ

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերոին

ՄԱՐԶԱԿԱՆ

«Տոտենհեմը» Յաղթեց «Մանչեսթեր Սիթիին»



Անգլիայի առաջնութեան 25-րդ տուրում «Տոտենհեմը» Լոնտոնում մրցեց խոյեան «Մանչեսթեր Սիթիի» հետ: Պորտուգալացի ժողե Մոուրինյոյի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 2:0 հաշուով:

«Տոտենհեմի» կազմում երկրորդ խաղակէստւած աչքի ընկան նորամուտը նշած հոլանտացի յարձակուող Սթիվեն Բերգվէյնն ու հարակորեացի յարձակուող Սոն Հին Մինը:

40-րդ րոպէին հաշիւը կարող էր բացել «Մանչեսթեր Սիթիի» կիսապաշտպան Իլկյա Գիւնդոգանը, սակայն Գերմանիան ներկայացնող ֆուտպոլիստը չկարողացաւ արդիւնաւէտ իրացնել 11 մեթրանոցը:

Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած թիմը 60-րդ րոպէից հանդէս եկաւ 10 ֆուտպոլիստներով: Երկրորդ դեղին քարտի համար հեռացուեց ուկրաինացի պաշտպան Ալեքսանդր Զինչենկոն:

«Մանչեսթեր Սիթիին» 51 միակորով մնաց երկրորդ տեղում եւ արդէն 22 միակոր հետ է առաջատար «Լիւերպոլից»: «Տոտենհեմը» 37 միակորով բարձրացաւ 5-րդ տեղ՝ շրջանցելով «Շեֆիլդ Յունայթեդին», «Մանչեսթեր Յունայթեդին» եւ «Վուլվերհեմթոնին»:

«Լիւերպոլի» Յաղթանակը՝ 4:0

Անգլիայի առաջնութեան 25-րդ տուրում առաջատար «Լիւերպոլը» տանը մրցեց «Սաութհեմթոնի» հետ:

Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմը վստահ յաղթանակ տարաւ 4:0 հաշուով: «Լիւերպոլի» կազմում աչքի ընկան անգլիացի կիսապաշտպաններ Ալեքս Օքսլէյը-Չեմբերլենն ու Ջորջան Հենդերսոնը եւ եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը, որը դարձաւ դուբլի հեղինակ:

«Լիւերպոլը» 24 յաղթանակից եւ 1 ոչ ոքից հետո 73 միակորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղում ընթացող «Մանչեսթեր Սիթիին» 24 խաղից յետոյ ունի 51 միակոր:

Ռոնալդուն 50-րդ Կոլը Խփեց «Յուվենտուսում»

Իտալիայի առաջնութեան 22-րդ տուրում «Ֆիորենտինային» (3:0) երկու կոլ խփելու շնորհիւ Թուրինի «Յուվենտուսի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն իտալական թիմում խփած կոլերի քանակը հասցրեց 50-ի: 2018թ. ամրանը «Ռեալից» Թուրին տեղափոխուած 34-ամեայ ֆուտպոլիստը 70 հանդիպում է անցկացրել «Յուվենտուսում»:

Իտալիայի առաջնութեան Ռոնալդուն գոլի հեղինակ է դառնում 9 խաղում անընդմէջ: «Յուվենտուսի» պատմութեան մէջ նա այսպիսի շարք գրանցող երկրորդ խաղացողն է: Առաջինը եղել է ֆրանսացի Դավիդ Տրեզեգեն՝ 2005թ. Չոկտեմբեր-Դեկտեմբերին:

«Ռոման» Պարտուեց՝ 2:4

Իտալիայի առաջնութեան 22-րդ տուրում «Ռոման» պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի ղեկավարութեամբ հիւրընկալուեց «Սասուոլոյին» եւ պարտուեց 2:4 հաշուով:

Մայրաքաղաքային թիմից աչքի ընկան բոսնիացի յարձակուող Էդին Զեկոն եւ ֆրանսացի կիսապաշտպան Ժորջան Վերետուն:

Վերջնամասը «Ռոման» անցկացրեց 10 ֆուտպոլիստներով: Երկրորդ դեղին քարտի համար հեռացուեց իտալացի կիսապաշտպան Լորենցո Պելեգրինին:

Ազգրի վնասուածքից յետոյ վերականգնուած եւ ընդհանուր խմբում մարզուող Հենրիխ Մխիթարեանը բացակայում էր «Ռոմայի» յայտացուցակից:

«Ռոման» 39 միակորով չորրորդ տեղում է, «Սասուոլոն» 13-րդն է՝ 26 միակոր:

«Բարսելոնայի» 17-ամեայ Խաղացող Անսու Ֆատին 2 Կոլ Խփեց 2 Րոպէում

Սպանիայի առաջնութեան 22-րդ տուրում «Բարսելոնան» ընդունել է «Լեւանտին» եւ առաջին խաղակէսից յետոյ յաղթում է 2:0 հաշուով:

Երկու րոպէում դուբլի հեղինակ է դարձել 17-ամեայ կիսապաշտպան Անսու Ֆատին: Երկու կոլային փոխանցումներն էլ կատարել է արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսին:

Հենրիխ Մխիթարեանը՝ 2019թ. Հայաստանի Լաւագոյն Ֆուտպոլիստ

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան ամփոփել է նաեւ «Տարուայ լաւագոյն ֆուտպոլիստ» անուանակարգում 2019 թ. քուէարկութեան արդիւնքները: Հաւաքելով 109 միակոր՝ Հայաստանի լաւագոյն ֆուտպոլիստ է ճանաչուել Հայաստանի ազգային հաւաքականի աւագ եւ իտալական «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որն արժանանում է այս կոչմանը 9-րդ անգամ:

104 միակորով երկրորդ տեղում է Հայաստանի ազգային հաւաքականի եւ գերմանական «Հոֆենհայմի» յարձակուող Սարգիս Ադամեանը:

61 միակորով երրորդ տեղում է Հայաստանի ազգային հաւաքականի եւ դազախական «Աստանա» ակումբի յարձակուող Տիգրան Բարսեղեանը:



Մխիթարեանը Յոյս Ունի Յաջորդ Շաբաթ Վերադառնալ Կազմ

Հենրիխ Մխիթարեանը յոյս է յայտնել յաջորդ շաբաթ վերադառնալ պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխավորած թիմի կազմ:

Այդ մասին նա ասել է «Ռոմայի» երկրպագուների հետ հանդիպման ժամանակ:

Յիշեցնենք, որ Հենրիխ Մխիթարեանը վերականգնուել է ազգրի վնասուածքից յետոյ եւ մասնակցում է «Ռոմայի» ընդհանուր խմբի մարզումներին, սակայն դեռ չի յայտնուում թիմի յայտացուցակում:


Սարգիս Ադամեանը՝ «Հոֆենհայմի» Յունուարի Լաւագոյն Ֆուտպոլիստ

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականի եւ գերմանական «Հոֆենհայմի» յարձակուող Սարգիս Ադամեանը ճանաչուել է գերմանական ակումբի Յունուար ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստ, յայտնում է ակումբի մամուլի ծառայութիւնը:

Սարգիս Ադամեանի հետ ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստի կոչմանը յաւակում էին նաեւ գերմանացի պաշտպան Բենջամին Հիւբներն ու աստրիացի կիսապաշտպան Քրիստոֆ Բաումգարտները: Հայաստանի հաւաքականի յարձակուողը յաղթող է ճանաչուել՝ ստանալով ընդհանուր ձայների 74 տոկոսը:

Յունուարին Սարգիս Ադամեանը «Հոֆենհայմի» կազմում 2 խաղում դարձել է 1 կոլի հեղինակ:

Սարգիս Ադամեանը «Հոֆենհայմի» լաւագոյն ֆուտպոլիստ էր ճանաչուել նաեւ Հոկտեմբերին:



Նովակ Ջոկովիչը 8-րդ Անգամ Նուաճեց AusOpen-ի Տիտղոսը

Աշխարհի երկրորդ ուսկետ Նովակ Ջոկովիչը 8-րդ անգամ նուաճեց թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան չեմպիոնի տիտղոսը՝ պաշտպանելով անցած տարի նուաճած տիտղոսը: Նա ռեկորդակիր է այս մրցաշարի տղամարդկանց մենախաղի տիտղոսների քանակով:

Եզրափակիչում 32-ամեայ սերբ մարզիկը մրցեց 26-ամեայ աստրիացի Դոմինիկի Տիմի հետ եւ յաղթանակ տարաւ հինգ սեթում՝ 6:4, 4:6, 2:6, 6:3, 6:4: Պայքարը տեւեց 4 ժամ 3 րոպէ:

Աշխարհի 5-րդ ուսկետ Դոմինիկ Տիմը պատմութեան մէջ առաջին աստրիացի թենիսիստն է, որը հանդէս եկաւ այս մրցաշարի եզրափակիչում:



Սետիեն. Հրաշալի է, որ Նեյմարը Ցանկանում է Վերադառնալ «Բարսելոնա»

Կատալոնական «Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Կիկէ Սետիենը խօսել է ֆրանսական ՊՍԺ-ի յարձակուող Նեյմար Ժոնիորի՝ «Բարսելոնա» հնարաւոր վերադարձի մասին:

«Հրաշալի է, որ Նեյմարը ցանկանում է վերադառնալ «Բարսելոնա»: Ինձ դուր է գալիս հետեւել բարձրակարգ ֆուտպոլիստներին խաղին, իսկ Նեյմարն աշխարհի լաւագոյն խաղացողներից մէկն է:

Ուրախ կը լինեմ, եթէ իմ թիմում տեսնեմ Նեյմարին եւ կարողանամ ամեն օր հետեւել նրա խաղին», - Սետիենի խօսքը փոխանցում է Mundo Deportivo-ն:



Դուք արժանի
էք
հաշուրդելու



Մարդահամարը տեղի պիտի ունենայ այս Գարնան

Մարտի կեսին սկսեալ, կրնանք պատասխանել ինն պարզ հարցումներու, որպէսզի կարենանք օգնել տեղեկացնելու, թէ մեր համայնքներուն մէջ, յաջորդ տարի դրամը ինչպէ՛ս պետք է ծախսուի:
Բոլոր հարցումները պաշտպանուած են եւ գաղտնի:

Իմացէք աւելին՝ այցելելով CaliforniaCensus.org կայքը: